



Մամլո հաղորդագրություն

«ԱԴԱՄԻ մեդիա մրցանակ Արևելյան Եվրոպայում մշակութային բազմազանության համար» ծրագրի շնորհանդեսը և մշակութային բազմազանությանն ու միջմշակութային երկխոսությանը նպաստող ակնառու ֆիլմերը, հեռուստատեսային և առցանց ծրագրերը պարգևատրող միջազգային մեդիա մրցույթի մեկնարկը կազդարարվի

**ուրբաթ՝ սեպտեմբերի 4-ին, ժամը՝ 12:00-ին,
Ռոյալ Թուլիփ Գրանդ Հոթել Երևան հյուրանոցի Վիվալդի սրահում
(հասցեն՝ Աբովյան 14, Երևան):**

ԱԴԱՄԻ-ի գաղափարը և մրցույթին մասնակցելու պայմանները կներկայացվեն ծրագրի տնօրեն պրն. Ստեփան Տոլցի կողմից: Իսկ հրավիրված բանախոսները կընդգծեն Հայաստանում և տարածաշրջանում նախաձեռնության արդիականությունն ու ծրագրի արժարժած թեմաները.

պրն. Հարություն Խաչատրյան
«Ոսկե ծիրան» Երևանի միջազգային կինոփառատոնի տնօրեն

պրն. Էրիկ Անթառանյան
Հայաստանի հանրային հեռուստաընկերության միջազգային կապերի բաժնի ղեկավար

տկն. Միքայել Գալստյան
Երևանի պետական համալսարանի և Երևանի թատրոնի և կինոյի ինստիտուտի դասախոս, կինոքննադատ, ազգային և միջազգային կինոփառատոների ժյուրիի անդամ

պրն. Ստեփան Գրիգորյան
Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոնի նախագահ

The ADAMI Media Prize is an initiative of Forschungsgruppe Modellprojekte e.V., Germany funded by the Federal Foreign Office.

www.adamimediaprize.eu

տկն. Նադիա Լիխտենբերգ

Հայաստանում Գերմանիայի Դաշնային Հանրապետության փոխդեսպան

Հայաստանյան բոլոր զլմ-ի ներկայացուցիչները հրավիրվում են մասնակցելու այս նոր մրցույթին, քանզի այն բացառիկ հնարավորություն է ընձեռում շփվելու Արևելյան Գործընկերության երկրների և Եվրամիության մասնագետների հետ:

ԱԴԱՄԻ-ի և ուրբաթ օրվա ասուլիսի մասին հավելյալ տեղեկատվության համար խնդրում ենք կապ հաստատել մեր ներկայացուցչի՝ Արմեն Շախկյանի հետ (հեռ.՝ 099 62 08 60, էլ.հասցե՝ armshake@yahoo.com):

Ծրագրի և մրցույթի մասին

ԱԴԱՄԻ մեդիա մրցանակի կիզակետում են ԵՄ-ի Արևելյան գործընկերության վեց երկրների (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Բելառուս, Մոլդովա և Ուկրաինա) լրագրողները և զանգվածային լրատվամիջոցների մասնագետները: Մրցույթին կարող են մասնակցե՛ծ տարբեր ազգերի, էթնիկ, կրոնական և մշակութային ավանդույթների տեր մարդկանց խաղաղ գոյակցությանը նպաստող ֆիլմերը, հեռուստատեսային և առցանց ծրագրերը:

ԱԴԱՄԻ մեդիա մրցանակ 2015-ը կտրվի վեց անվանակարգերում՝ վեց մրցանակով.

- ԱԴԱՄԻ մեդիա մրցանակ՝ ժամանցային կատեգորիայի (էնթրթեյնմենթ) համար (խաղարկային)
- ԱԴԱՄԻ մեդիա մրցանակ՝ տեղեկատվության համար (ոչխաղարկային)
- ԱԴԱՄԻ մեդիա մրցանակ՝ նորությունների և կարճամետրաժ ֆիլմերի համար (ոչխաղարկային)
- Երիտասարդ ԱԴԱՄԻ մեդիա մրցանակ
- ԱԴԱՄԻ առցանց մրցանակ՝ վեբ կայքերի համար
- ԱԴԱՄԻ առցանց մրցանակ՝ վեբ տեսանյութերի համար

ԱԴԱՄԻ Մեդիա Մրցանակ 2015-ի մրցանակակիրները կհայտարարվեն 2015 թվականի դեկտեմբերին Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում կայանալիք միջազգայնորեն հեռարձակվող հեռուստատեսային գալա միջոցառման ընթացքում:

Հայտերը հարող են ներկայացվել մինչև հոկտեմբերի 25-ը (հայտերի ընդունման վերջնաժամկետը): Մասնակից հեռարձակողները, արտադրող կազմակերպությունները, կրթական հաստատությունները և անհատները պետք է գրանցվեն www.adamimediaprize.eu կայքում և Թբիլիսյան գրասենյակ ուղարկեն լրացված ձևաթղթով երկու DVD սկավառակ: Մանրամասն տեղեկատվության համար ծանոթացեք կայքում տեղադրված մեր կանոնակարգին և գրանցման գրքույկին:

The ADAMI Media Prize is an initiative of Forschungsgruppe Modellprojekte e.V., Germany funded by the Federal Foreign Office.

www.adamimediaprize.eu

ԱԴԱՄԻ մեդիա մրցանակ մշակութային բազմազանության համար
Շվեյցարական համագործակցության Հարավային Կովկասի գրասենյակ
Ռադիանի փողոց 12
0179 Թբիլիսի, Վրաստան
Հեռ.՝ +995 32 222 57 59
Էլ. հասցե՝ competition@adamimediaprize
www.adamimediaprize.eu

The ADAMI Media Prize is an initiative of Forschungsgruppe Modellprojekte e.V., Germany
funded by the Federal Foreign Office.

www.adamimediaprize.eu